ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2



HABITUS 2

NATIONAL ACADEMY OF SCIENCES RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

2

H A B I T U S

STUDIES IN ANTHROPOLOGY AND ARCHAEOLOGY

2

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

2

H A B I T U S

АНТРОПОЛОГИЧЕСКИЕ И АРХЕОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

2

«GITUTYUN» PUBLISHING HOUSE
YEREVAN 2017

ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН»
ЕРЕВАН 2017

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2

Հ Ա Բ Ի Տ Ո Ւ Մ

ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ՀՏԴ 902/904
ԳՄԴ 63.4
Հ 125

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ.
Պավել Ավետիսյան (*գլխավոր խմբագիր*), Լևոն Աբրահամյան, Գրեգորի Արեշյան, Ռուբեն Բադալյան, Պիտեր Քաուի, Տորք Դալալյան (*պատասխանատու քարտուղար*), Պատրիկ Տօնապետեան, Միհրան Գալստյան, Սարգիս Հարությունյան, Թամար Հայրապետյան, Լորի Խաչատուրեան, Թեո վան Լինտ, Հարություն Մարության, Արմեն Պետրոսյան, Համլետ Պետրոսյան, Գագիկ Սարգսյան, Ադամ Սմիթ, Ջուստո Տրաինա

Editorial Board:
Pavel Avetisyan (*editor-in-chief*), Levon Abrahamian, Gregory Areshian, Rouben Badalian, Peter Cowe, Tork Dalalyan (*assistant editor*), Patrick Donabédian, Mihran Galsyan, Sargis Harutyunyan, Tamar Hayrapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Harutyun Marutyan, Armen Petrosyan, Hamlet Petrosyan, Gagik Sargsyan, Adam Smith, Giusto Traina

Համարի գրախոսներ՝
Հարություն Մարության, *պատմական գիտությունների դոկտոր*
Արսեն Բոբոխյան, *պատմական գիտությունների թեկնածու*

Համարի խմբագիրներ՝
Համլետ Մելքումյան, *պատմական գիտությունների թեկնածու*
Ռոման Հովսեփյան, *կենսաբանական գիտությունների թեկնածու*

Մարդաբանություն, հնագիտություն թեմատիկ երգիծանկարների հեղինակ՝ ազգագրագետ Լևոն Աբրահամյան

The volume is edited by Hamlet Melkumyan *and* Roman Hovsepyan
The cartoons are authored by Levon Abrahamyan, *anthropologist*

Հ 125 Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ 2: ՀԱԲԻ-ՏՈՒՍ 2: ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ. Խմբ. Հ. Մելքումյան, Ռ. Հովսեփյան – Եր.: Գիտություն, 2017. – 264 էջ:

ՀՏԴ 902/904
ԳՄԴ 63.4

ISBN 978-5-8080-1293-6

© ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2017 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Սուսաննե Ֆիլինգս
Հայոց պատմությունը քաղաքային առօրեականության մեջ 10

Համլետ Մելքումյան
Հիշողությունից ազգայնականությո՞ւն,
խորհրդային և հետխորհրդային հուշարձանները 42

Էլեն Գրիգորյան
Եվրատեսիլ երգի մրցույթը որպես ինքնությունների,
ազգայնականության և քաղաքականության արտահայտման բեմ 65

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լիլիթ Մանուկյան
Կյանքը դեֆիցիտի պայմաններում. կանացի հագուստի
պրակտիկաները Երևանում 1970-80-ականներին 93

ՍՓՅՈՒՌՔ ԵՎ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Էլլի Պոնոմարյովա
Բնիկ թիֆլիսցիներ թե՞ Սփյուռք. քննարկում թիֆլիսաբնակ
հայերի կարգավիճակի շուրջ 117

Սյուզաննա Բարսեղյան
Հայկական մամուլի դերը Սփյուռքում էթնոմշակութային արժեքների վերար-
տադրման և տարածման գործում 142

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ ԲՌՆԱԳԱՂԹ

Շուշանիկ Ղազարյան
ՀՀ-ում ադրբեջանահայ փախստականների ինտեգրման
գործընթացում հայերենի իմացության խնդիրը 152

Հասմիկ Գրիգորյան
Հայոց ցեղասպանությունից մինչև «քառօրյա պատերազմ».
բռնության օրինականացման մշակութային գործոնները 163

Լուսինե Տանաջյան
Սոցիալ-մասնագիտական ինտեգրման առանձնահատկությունները
Հայաստան ներգաղթած սիրիահայերի շրջանում 184

Սոնա Ներսիսյան
Ցանցային հարաբերությունները Հայաստան ներգաղթած սիրիահայերի շրջանում 195

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ռոման Հովսեփյան
Հնաբուսաբանական նմուշառում. դաշտային աշխատանքների ուղեցույց 212

Արթուր Պետրոսյան
Քարե գործիքների ուսումնասիրության մեթոդոլոգիան 217

Աննա Ազիզյան
Դիտողություններ Հայաստանի կուր-արաքսյան խեցեղենի հազվադեպ հանդիպող զարդաձևերի վերաբերյալ 238

Ավետիս Գրիգորյան
Սոթքի տարածաշրջանի անտիկ և միջնադարյան հուշարձանները 249

CONTENTS

CULTURAL ANTHROPOLOGY

IDENTITY AND NATIONALISM IN PUBLIC SPACES

Susanne Fehlings
Armenian History in Urban Everyday Life 10

Hamlet Melkumyan
From Memory to Nationalism?
The Soviet and post-Soviet Memorials in Rural Daily Life 42

Elen Grigoryan
Eurovision Song Contest as a Stage: Performing Identities,
Nationalism and Politics 65

SOVIET DAILY LIFE

Lilit Manukyan
Living in Deficiency: Female Clothing Practices in Yerevan in 1970-80s 93

DIASPORA AND NATIONALISM

Elli Ponomareva
Native Tbilisians or Diaspora: Negotiating the Status
of Armenians in Tbilisi 117

Syuzanna Barseghyan
The Role of Armenian Press in Reproduction and Dissemination
of Ethnic and Cultural Values in the Diaspora 142

WAR AND FORCED MIGRATION

Shushanik Ghazaryan
The Importance of Armenian Language in the process of integration
of Armenian refugees from Azerbaijan in Republic of Armenia 152

Hasmik Grigoryan
From The Armenian Genocide to the “4-Day War”
Cultural Factors of Violence Legalization 163

Lusine Tanajyan
Social-professional Features of Integration of Syrian-Armenian
Immigrants in Armenia 184

Sona Nersisyan
Network Relations among Syrian-Armenian Immigrants in Armenia 195

ARCHAEOLOGY

Roman Hovsepyan
Archaeobotanical sampling: Instructions for fieldwork 212

Artur Petrosyan
Methodology for the Study of Stone Artefacts 217

Anna Azizyan
Remarks on the Rare Ornaments of Kura-Araxes Ceramics of Armenia 238

Avetis Grigoryan
The History of Investigation of Antique
and Medieval Sites of the Sotk Region 249

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ



CULTURAL ANTHROPOLOGY

7

Շուշանիկ Ղազարյան

Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ

ՀՀ-ում ադրբեջանահայ փախստականների ինտեգրման գործընթացում հայերենի իմացության խնդիրը

1988-92 թթ. Խորհրդային, ապա Հայաստանի Հանրապետություն Ադրբեջանից բռնագաղթվածների 81%-ն ապրել էին Ադրբեջանի խոշոր քաղաքներում և նրանց 70%-ից ավելին ունեցել են բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն: Ադրբեջանահայ փախստականների զգալի մասի հիմնական լեզուն ռուսերենն էր (Պողոսյան և Ավագյան 1998: 38): Այն փախստականները, որոնք ծնվել և մեծացել են Ադրբեջանում, ռուսերենը համարում են իրենց մայրենի լեզուն (դպրոցական, բարձրագույն կրթությունը եղել է ռուսերեն): Հոդվածում անդրադառնում եմ Հայաստանի Հանրապետությունում ադրբեջանահայ փախստականների սոցիալ-մշակութային ինտեգրման համար հայերենի կարևորության խնդրին: Քննարկելու եմ ադրբեջանահայ փախստականների՝ հայաստանցիների հետ հաղորդակցման դժվարությունները, լեզվական խոչընդոտները հաղթահարելու ուղիները, մասնավորապես, թե ինչպես են կարողացել աշխատանք գտնել, ինչ պետական քաղաքականություն է տարվել՝ նրանց աջակցելու համար: Այս խնդրի հետազոտությունն իրականացվել է 1988-92 թթ. Խորհրդային, ապա Հայաստանի Հանրապետություն Ադրբեջանից բռնագաղթված հայկական ինքնությամբ փախստականների հետ: Հոդվածում քննարկելու եմ ինտեգրման և՛ իրավական, և՛ առօրյա մշակութային տարբերակները:

Ինտեգրացիան նախևառաջ իրավական գործընթաց է, երբ փախստականը հնարավորություն է ձեռք բերում օրինական ճանապարհով աշխատելու, բարելավելու սեփական կացությունն ու տնտեսապես ավելի քիչ կախման մեջ լինելու պետությունից ու միջազգային կազմակերպությունների բարեգործական օգնություններից (Crisp 2004): Ինտեգրումը նաև սոցիալական և մշակութային գործընթաց է, որը հնարավորություն է տալիս փախստականներին մասնակցելու երկրի սոցիալական կյանքին և ապրելու առանց վախի ու խտրականության:

Հետազոտությունն իրականացվել է Շիրակի 2ա, Արցախի փ. 4-րդ նրբանցք 10/2 հանրակացարաններում բնակվող 55 տարեկանից բարձր ադրբեջանահայ փախստականների հետ:

Բանալի բառեր. *փախստական, ադրբեջանահայեր, ինտեգրման քաղաքականություն, հայերեն, բռնագաղթ, բռնություն, հանրակացարան, աշխատանք, խտրականություն:*

Shushanik Ghazaryan

Institute of Atchaeology and Ethnography, NAS RA
shushan11@yahoo.com

The Importance of Armenian Language in the process of integration of Armenian refugees from Azerbaijan in Republic of Armenia

The majority (81%) of deported Armenians from Azerbaijan from Azerbaijan in 1988-92s, used to live in big cities of Azerbaijan and 70% of them had high or vocational education. Their basic language is Russian and they accept it as their mother tongue (education at school, university etc.). The importance of Armenian language knowledge for social-cultural integration in Armenian society of Armenian refugees from Azerbaijan is the key discussion in my paper. I will focuse on the communication difficulties with locals in Armenia, how they could overcome language issues, how they could find work and what kind of policy was organized by authorities to help them overcome language issues.

The integration first of all is a legal process, whereby refugees are granted a progressively wider range of rights and entitlements by the host state. Second, local integration can be regarded as an economic process. For in acquiring the rights and entitlements referred to above, refugees also improve their potential to establish sustainable livelihoods, to attain a growing degree of self-reliance, and to become progressively less reliant on state aid or humanitarian assistance. Integration is also a social process, enabling refugees to live among or alongside the host population, without fear of systematic discrimination, intimidation or exploitation by the authorities or people of the asylum country.

The research was done in Artcakh and Shirak dormitories of Yerevan. Qualitative and deep interviews were done with elder than 55 years old people from Baku.

Key words: *Refugee, integration policy, mother tongue, deportation, violence, dormitory, labour, discrimnation.*

Шушаник Газарян

Проблема знания армянского языка в процессе интеграции беженцев из Азербайджана в Республике Армения

В статье обсуждается важность армянского языка в процессе социально-культурного интегрирования беженцев. Исследование данного вопроса было осуществлено в 1988-92 гг. среди беженцев с армянской идентичностью, которые были выселены из Азербаиджана в Советскую, а после – в Республику Армении. Я заключаю, что незнание армянского языка являлось препятствием для их социализации и интеграции. Они были механическим путем отчуждены от общества, что и сделало процесс социализации невозможным, а также стало препятствием для решения социально-экономических проблем.

■■■

Ադրբեջանից հայ փախստականների հոսքը սկսվեց 1988 թ. սումգայիթյան կոտորածներից հետո և շարունակվեց մինչև 1992 թ.: Հոդվածում դիտարկում եմ, թե ինչ քաղաքականություն է տարվել այդ տարիներին, որպեսզի Հայաստան բռնագաղթած ադրբեջանահայերը սովորեն հայոց լեզուն, և քննարկում եմ, թե ինչպիսի նշանակություն է ունեցել հայերենի իմացության խնդիրը՝

մարդկանց հետագա կյանքը կարգավորելու համար: Լեզվի կարևորությունն ինտեգրման գործընթացում ներկայացնելու համար քննության եմ ենթարկելու երեք կարևոր խոչընդոտ հանդիսացող ոլորտներ՝ բնակարանային, սոցիալ-տնտեսական դժվարություններ և գիտության-կրթության հիմնախնդիրներ:

Խնդիրն ուսումնասիրելու համար անցկացրել եմ որակական, խորացված հարցազրույցներ Շիրակի 2ա, Արցախի փ. 4-րդ նրբանցք 10/2 հանրակացարաններում բնակվող 55 տարեկանից բարձր ադրբեջանահայ փախստականների հետ[1]: Առօրյա սոցիալ-մշակութային ինտեգրումը և նրա հետ կապված խնդիրներն ուսումնասիրելու համար վերլուծել եմ բռնագաղթած փախստականների անձնական բանավոր պատմությունները (հմմտ. Eastmond 2007): Ինտեգրման իրավական կողմն ուսումնասիրելու համար անցկացրել եմ նաև փորձագիտական հարցազրույցներ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության միգրացիոն պետական ծառայության տարբեր մասնագետների հետ (Ղազարյան 2015-2016):

Քննվող պարագայում բռնագաղթի ենթարկված փախստականության կազմակերպումը բարդ խնդիր է ոչ միայն և ոչ այնքան մարդկանց խմբերի տեղափոխման բուն գործընթացի մասշտաբների առումով, այլ նաև այն պատճառով, որ պահանջում է հարցի խոր իմացություն, նախապատրաստական հսկայածավալ աշխատանքների իրականացում, բարձր մակարդակի կազմակերպվածություն, ինչպես նաև պետության կողմից տարիների քրտնաջան աշխատանք արդեն բնակության նոր վայրերում՝ նորեկ բնակչությանը նոր բնակավայրի առօրյա իրողություններին ծանոթացնելու համար (Մարության 2009: 91), ինչպես նաև զանգվածային ներգաղթի ժամանակ ընդունող կողմը պարտավորվում է բռնագաղթածներին ապահովել կացարանով, բժշկական ապահովագրությամբ, ուտելիքով, կազմակերպել ու տրամադրել մասնագիտական և լեզվական հմտությունների հնարավորություններ (Ghazaryan 3), չնայած որ հայոց պատմության մեջ հայ փախստականների ընդունման առաջին փորձը չէր, և հատկապես 1915 թ. ցեղասպանությունից հետո հայերը բազմիցս առնչվել են փախստականություն երևույթի հետ, փորձը ցույց է տվել, որ յուրաքանչյուր ժամանակաշրջանի փախստականներն ունեն իրենց ինտեգրման առանձնահատկություններն ու դժվարությունները (Kharatyan 2008):

1988-92 թթ. փախստականության հոսքից հետո Հայաստանի նորանկախ Հանրապետությունում չկային փախստականության հարցերով զբաղվող պետական մարմիններ ու մշակված հստակ քաղաքականություն, որի համաձայն պետք էր կազմակերպել, ընդունել ու տեղավորել փախստականներին: Ադրբեջանից բռնագաղթած փախստականների տեղավորման և ինտեգրման գործընթացը կազմակերպելու համար 1989 թ. Գյուղատնտեսության մինիստ-

1 Վերը նշված հանրակացարաններում փախստականների հիմնական տարիքային սահմանը 55-ից բարձր է, հետևաբար՝ հարցազրույցներն անցկացրել եմ այդ տարիքային խմբի մարդկանց հետ:

ության կազմում ստեղծվեց Փախստականների ընդունման և տեղավորման վարչություն, ապա Հայկական ԽՍՀ վերադարձող հայերի ընդունման և տեղավորման պետական կոմիտեի հիմքի վրա 1990 թ. դեկտեմբերին ձևավորվում է ՀՀ Նախարարների խորհրդին առընթեր Փախստականների հարցերի կոմիտեն (http://www.smsmta.am/?menu_id=68):

Հայաստանում ՄԱԿ ՓՀԳՀ գրասենյակի ներկայացուցիչ Քրիստոֆեր Բիրվիրթի կարծիքով ադրբեջանահայ փախստականների ինտեգրումը պետք է լիներ ավելի հեշտ, քանի որ նրանք ապրել են Խորհրդային Միությունում և կիսել մեկ ընդհանուր խորհրդային կենսափորձ, սակայն ադրբեջանահայերը հանդիպեցին այնպիսի խոչընդոտների, որոնք իսկապես հիմնարար պատճառներ դարձան՝ լիարժեք ինտեգրումը ձախողելու համար (Migration Newsletter 2015): Խորհրդային, ապա Հայաստանի Հանրապետություն տեղափոխված փախստականների առաջին կարևոր խնդիրը բնակություն հաստատելն էր: Հաջորդ խնդիրներից էր սոցիալ-տնտեսական դժվարությունները հաղթահարելու համար աշխատանք գտնելը և իրենց երեխաներին բարձրագույն կրթությամբ ապահովելը, որն այնուհետև պետք է երաշխիք լիներ՝ հասարակության մեջ «լավ դիրք»[2] զբաղեցնելու համար:

Ադրբեջանահայ փախստականների բնակության, բնակարանային խնդիրներով զբաղվում էր Փախստականների հարցերի կոմիտեն: Հայաստանում տիրող արտակարգ իրավիճակից ելնելով (Սպիտակի երկրաշարժի հետևանքով Հայաստանում կար կես միլիոն անօթևան մարդ, երկրի 1/3 մասն ավերված էր)՝ փախստականներին տեղավորում էին հանրակացարաններում, առողջարաններում, դպրոցներում, այսինքն՝ հնարավոր բոլոր վայրերում, որը կրելու էր ժամանակավոր բնույթ: Սակայն քսանվեց տարի անց հանրակացարաններում դեռևս կան Ադրբեջանից բռնագաղթածներ, որոնք դեռ սպասում են իրենց բնակարանի հարցի լուծմանը: Նրանցից 72-ամյա մի կին ինձ պատմեց.

«Մենք եկանք, սկզբում բնակվում էինք մեր բարեկամների տանը, բայց մշտապես չէինք կարող ապրել, վեց ամիս ապրելուց հետո գնացինք վարձով բնակվեցինք, հետո փախստականների շտաբում գրանցված էինք, 1992 թ. սենյակ տվեցին էստեղ, ու մինչև հիմա ապրում ենք: Ես Երևանում երկրորդ անգամ էի լինում, այսինքն՝ քաղաքը չգիտեի, երբ ասեցին Զարբախ թաղամասի հանրակացարանում ազատ սենյակ կա՝ ուրախացա, բայց չէի պատկերացնում, որ աշխարհից էսպես կտրված է: Էն տարի-

2 «Լավ դիրք» ասելով ադրբեջանահայ փախստականները նկատի ունեն ստանալ կրթություն, ապա աշխատել համապատասխան մասնագիտությամբ և լինել հարգված հասարակության մեջ: Հատկապես 1990-ական թթ. նրանց համար աշխատանք գտնել ու ապահովել ընտանիքի սոցիալական խնդիրները բավականին բարդ էր: Նրանցից շատերը թեև ունեին բարձրագույն կրթություն, սակայն ստիպված աշխատում էին հավաքարար, բանվոր և այլն: Նրանք նշում էին, որ արդեն իրենք նվաստացած են իրենց զգում և չեն ուզենա նույն ճանապարհով իրենց երեխաները անցնեն:

ներին տրանսպորտի խնդիր կար, ամեն օր ես չէի կարող գնալ հասնել քաղաքի կենտրոն, հետ դառնալ, իսկ էս կտրված վայրում մնալով ո՛չ կարողացա մարդկանց հետ շփվել, ո՛չ էլ աշխատանք գտնել: Հետո հանրակացարաններում (հիմա ճիշտ է փոխվել է, շատերը գնացել են, շատերը մահացել) հիմնականում Բաքվից եկածներ էին, իրար հետ էինք կիսում մեր խնդիրները, իրար երես էինք տեսնում, կտրված բոլորից, դրա համար էլ, հատկապես իմ տարիքի մարդիկ հայերեն մինչև հիմա էլ չգիտեն» (Ղազարյան 2015):

Ադրբեջանի փախստականները բավականին հաճախ նաև արժանանում էին տեղացիների ոչ բարեհամբույր վերաբերմունքին, սա էլ իր հերթին դժվարություն էր առաջացնում, որպեսզի տեղացիների հետ շփվեն ու ավելի հեշտությամբ հաղթահարեն լեզվական դժվարությունները: Հանրակացարանում բնակվող փախստական 74-ամյա մի կին իր սեփական օրինակը ներկայացրեց.

«Շատ անգամ է եղել տրանսպորտում, կամ հացի հերթի կանգնած ժամանակ, երբ խոսել եմ, սկսել են թարս-թարս նայել, կամ խոսք են նետել, որ շան լեզվով եմ խոսում: Դե հիմա ինչ կարող էի անել, եթե իմ լեզուն ռուսերենն էր, իսկ հայերենը ակցենտով էի խոսում»:

Տեղացիների նման վերաբերմունքը պատահական չէր, մի դեպքում այն կապված էր 1990-ական թթ. սկզբին կառավարության՝ ընդդեմ ռուսաց լեզվի որդեգրած քաղաքականության հետ՝ ի նշան Ռուսաստանից անկախանալու: Լեզվի այսօրինակ քաղաքականությունը պատճառ էր դառնում ներէթնիկ բազմաթիվ գժտությունների և մեխանիկորեն ուղղվում էր ընդդեմ ադրբեջանահայ փախստականների, որոնք խոսում էին ռուսերեն կամ լավագույն դեպքում՝ բարբառով (Abrahamyan 2005): Այս դեպքում փախստականները սկսում են ընկալվել որպես մրցակիցներ ՀՀ անկախությունից հետո սկիզբ առած տնտեսական նոր հարաբերություններում, նրանք սկսում են զգալ իրենց հասարակական բեռ լինելը՝ միաժամանակ գիտակցելով կորուստների ծավալը և կորուստները վերադարձնելու անհնարինությունը: Իսկ փախստականներին հատկացվող օգնությունները սկսեցին ընկալվել որպես աղքատացող բնակչությունից խլվող բաժին, միաժամանակ կտրուկ նվազեցին փախստականներին օգնելու հասարակական ու անհատական հնարավորությունները (Խառատյան 1999: 58-59): Փախստականների սոցիալական խտրականության մասին բռնագաղթված զրուցակիցս պատմում էր.

«Մտածեցի, որ Հայաստանում բարեկամներ ունեմ, մի օր մեկի տանը, մեկը կօգնի, մինչև կտեղավորվենք, բայց արի ու տես, որ մարդիկ փախստականներին չսիրեցին: Ինձ ասում ա ես եմ սոված, դու էլ էկել ես իմ հացն ես ուտում: Ավելորդ բեռ էինք, ավելորդ հոգս: Էտենց շվարած մնացինք, առանց բարեկամի, բարեկամներ կան, բայց հաշիվ արա, որ չկան» (Ղազարյան 2015: 86-ամյա կին):

Այս ամենից ելնելով՝ «տեղացիների» ու «նորեկների» միջև «հակադրության» խնդիրն անխուսափելի էր: Պետությունն այս կամ այն չափով տեղյակ էր երկու կողմի խնդիրներին, սակայն խորությամբ հնարավոր չէր ամեն ինչ վերանայել և երկու կողմի միջև հանդես գալ որպես կամուրջ:

Իր սկզբնական դժվարությունների մասին պատմում է Շիրակի հանրակացարանում ապրող 84-ամյա տիկին Ժենյան[3].

«Երբ եկա Հայաստան 1989 թ., արդեն թոշակի տարիքում էի, ծանոթներ չունեի, իմ ընկերների հետ էի եկել Հայաստան, որոնք էլ ինձ նման չէին հասկանում ինչ անել, ինչից սկսել: Ես նավթարդյունաբերության մասնագետ եմ, այստեղ ինչ աշխատանք պիտի գտնեի, մտածեցի աշակերտ կպահեմ, ռուսերեն կսովորեցնեմ, կամ մաթեմատիկա կպարապեմ: Բայց չէ՞ որ հեղափոխությունից հետո ամեն ինչ դարձավ հայերեն, երբ գալիս էին ուղղակի խնդիր կամ վարժություն լուծելու, ես ասում էի թարգմանեք, դե նրանց համար ավելի հարմար էր գտնել մեկին, ով լեզվին տիրապետում է, ու էդպես էլ գործ չեղավ: Իմ շրջապատի մեջ շատերը գնացին սկսեցին աշխատել հավաքարարներ: Ես չեմ ասում ամոթ է հավաքարար աշխատելը, բայց իմ ֆիզիկականը թույլ չէր տալիս նման գործով զբաղվել» (Ղազարյան 2015: 79-ամյա կին):

Լեզուն չիմանալու պատճառով շատ փախստականներ չէին կարող աշխատանք գտնել, իսկ հայոց լեզուն սովորելու համար հնարավորությունները շատ սահմանափակ էին: Նրանց մի մասը սենյակ (ինչպես իրենք են նշում) ստացան հանրակացարաններում, որոնք գտնվում էին Երևանի ծայրամասերում, և տեղաշարժվելու խնդիր կար, իսկ լեզվի դասընթացներ կազմակերպվում էին բարձրագույն ուսումնական հաստատություններում, որոնք գտնվում էին քաղաքի կենտրոնում: ՀՀ փախստականների հարցերով զբաղվող վարչության նախկին աշխատակից Ս.Հովակիմյանը[4] ներկայացրեց, որ լեզվի պետական տեսչության հետ միասին բուհերում կազմակերպվում էին դասընթացներ 3-6 ամիս տևողությամբ, որը, սակայն, երկար չշարունակվեց: Լինում էին նաև կազմակերպչական խնդիրներ, որոնց պատճառով դասերն անժամկետ հետաձգվում էին: Փախստականներից 59-ամյա մի կին օրինակ բերեց իր սեփական փորձը.

«Շատ անգամ պոլիտեխնիկի պատուհաններին տեսել եմ հայտարարություններ, լեզվի դասերի էին հրավիրում, գնում գրանցվում էինք ու սպասում, այդպես ես ստիպված ինքնուրույն սովորեցի, երիտասարդ էի, կարողացա հաղթահարել այդ դժվարությունը» (Ղազարյան 2015):

---

3 Հետազոտությանը մասնակցած տիկին Ժենյան տվել է իր համաձայնությունը՝ անունը հոդվածում հրապարակելու համար:

4 Սամվել Հովակիմյանը նույնպես տվել է իր համաձայնությունը՝ հոդվածում անունը նշելու համար:

Չնայած այն հանգամանքին, որ խորհրդային ժամանակաշրջանում Ադրբեջանում բնակվող հայերը կիսում էին մեկ ընդհանուր «խորհրդային մշակութային իրողություն», բայց այժմ այն դաստիարակությունն ու իրերի կարգավորվածությունն այլևս չէին գործում նոր իրականության մեջ: Ժամանակ էր հարկավոր նոր արժեքային համակարգին հարմարվելու, յուրացնելու, ապա վերարտադրելու համար: Խորհրդային հասարակության մեջ գրագիտությունը համարվում էր բարձր չափանիշ, նախ՝ չափանիշ էր սկզբնական տարրական կրթությունը, ապա՝ ութամյա կրթությունը, և վերջապես 1970–80-ական թթ. հիմնարար ցուցիչ և չափանիշ դարձավ միջնակարգ կրթությունը, և «սովետական ինտելիգենցիան» ձևավորվելու գործընթացում ցուցիչը միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթությունն էր (Անտոնյան 2012): Կրթությունը նաև երաշխիք էր աշխատանք գտնելու և հետագա սոցիալական դիրքն ապահովելու համար (Арутюнян, Дробижева 1987): Խորհրդային Միությունը բազմազգ պետություն էր և սովետական մեկ միասնական պետություն ստեղծելու համար կարևոր նշանակություն ուներ նաև լեզուն: Խորհրդային քաղաքականության հիմնախնդիրն այն էր, որպեսզի դպրոցական կրթությունը, տպագրությունը, թատրոնը և այլ ոլորտներում գերիշխողը լիներ մեկ լեզու՝ ռուսերենը: Սրա ամենամեծ ապացույցն այն է, որ ռուսերենով տպագրված գրքերն ամենամեծ թիվն էին կազմում ողջ ԽՍՀՄ-ում: Հետևաբար՝ նշանակում էր՝ մասնագետ դառնալու համար առաջին հերթին պետք էր սովորել ռուսերեն (Арутюнян, Дробижева 1987): Ադրբեջանում բնակվող հայերը, լինելով այս համակարգում և ենթարկվելով գործող մշակութային քաղաքականությանը, հայերենը պահպանում էին որպես ազգային արժեք՝ այն օգտագործելով ընտանիքներում, սակայն հասարակության մասնիկ դառնալու, իրենց սոցիալական տեղն ու դիրքը գրավելու համար նախ՝ սովորում էին դպրոցներում, ապա բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթություն ստանում ռուսերենով: Այդպիսի կենսափորձ ունի 85-ամյա փախստական կինը.

> *«Իմ ծնողները փանը հայերեն էին խոսում, բայց դուրսը ես երբեք հայերեն չեմ խոսել, որովհետև մեր շփվելու հիմնական լեզուն եղել է ռուսերենը, նույնիսկ կարիք չեմ ունեցել ադրբեջաներեն սովորելու, ես հայ եմ, բայց իմ մայրենի լեզուն համարում եմ ռուսերենը, քանի որ կրթություն եմ ստացել, ապա աշխատել եմ ռուսերենով, իմ լեզվամտածողությունը ռուսերեն է: Միշտ լավ աշխատանքների եմ եղել Ադրբեջանում, բարձրագույն կրթություն դրա համար եմ ստացել, որ լավ ապրեմ, բայց եկա Հայաստան, սոված չէի նստելու, լեզու էլ չգիտեի, սկսեցի պոլիկլինիկայում հավաքարար աշխատել: Բժիշկներն ինձ շատ լավ էին վերաբերվում, բայց հավաքարարի տուն գնալ-գալ, ընկերություն ինչի՞ պիտի անեին, արդյունքում հիմնականում շփվում էի հանրակացարանի բնակիչների հետ»* (Ղազարյան 2015):

Ադրբեջանահայերից շատերը պատկերացնում էին, որ բռնություններից մազապուրծ լինելուց հետո իրենց փրկությունն ու հետագա կյանքը դասա-

վորվելու է իրենց հայրենիքում՝ Հայաստանում, նրանք ունենալու են հատուկ վերաբերմունք, արտոնություններ, կարճ ժամանակում կարողանալու են վերականգնել իրենց կյանքի բնականոն հունը: Սակայն, ինչպես հրեաների շրջանում ընդունված է ասել, հայրենադարձության ֆիզիկական և իրավական բուն գործընթացը մեկնարկում է Բեն-Գուրիոնի անվան օդանավակայան ժամանման պահից սկսած (Վերանյան 2015), նույնը տեղի չունեցավ ադրբեջանահայ փախստականների հետ: Ավելին, նաև ՀՀ պետական-մշակութային քաղաքականությունը, որի հիմքում ընկած էր ազգային արժեքների վերհանումը, որն էլ իր հերթին ավելի դժվարացրեց փախստականների վիճակը: 1993 թ. ՀՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունվեց լեզվի մասին օրենք, որի համաձայն՝ ՀՀ պետական լեզուն հայերենը հռչակվեց, որը սպասարկելու էր հանրապետության կյանքի բոլոր ոլորտները: Օրենքի մեջ կա նաև առանձին կետ, որի համաձայն՝ ՀՀ-ն աջակցելու է իր սահմաններից դուրս բնակվող հայերի շրջանում հայոց լեզվի պահպանմանը և տարածմանը, ինչպես նաև ՀՀ տարածքում երաշխավորում է ազգային փոքրամասնությունների լեզուների ազատ գործածությունը (ՀՀ օրենք լեզվի մասին 2016): Ինչպես երևում է, օրենքի մեջ փախստականներին վերաբերող որևէ կետ չկա, որը կօգներ նրանց հաղթահարելու լեզվական դժվարությունները: Փոխարենը պետական մշակութային քաղաքականության մեջ սկսում են հատուկ ուշադրություն դարձնել արևմտահայերենի տարածմանը և ավելի հաճախ կապ հաստատել ու հրավիրել արևմտահայերենի ուսուցիչների (Արսենյան 1991): Երբեմն շոշափվում էին նրանց լեզվական դժվարությունները, սակայն չէին առաջարկվում լուծումներ.

> *«Վերջին 4 տարում Կապան քաղաքում և շրջաններում տեղավորվել են շուրջ 500 փախստական երեխաներ, նրանց ծնողները տագնապում էին այն մտքից, թե ինչպես կարող էին սովորել հայերեն, եթե նույնիսկ տառաճանաչ չէին: Վերջերս ուսումնասիրություններից պարզվեց, որ տարրական եռամյա ուսուցման դասարանում հիմնականում հաղթահարվել են նախնական դժվարությունները: Իսկ բարձր դասարաններում, հատկապես 5, 6, 8, կան դժվարություններ և դրա հիմնական պատճառներից մեկը մատչելի ձեռնարկների, համապատասխան միջավայրի, օժանդակ գրականության, համապատասխան ծրագրերի բացակայությունն է»* (Շալունց 1992):

Դպրոցական երեխաների դժվարությունները հաղթահարելու, տառաճանաչ դառնալու խնդիրը երբեմն քննարկվում էր, սակայն ինչպես պետք է կարողանային մեծահասակները սոցիալ-տնտեսական խնդիրների հետ միասին հաղթահարել լեզվական դժվարությունները, այն չէր դիտարկվում որպես լուրջ խնդիր, սակայն լեզու չիմանալու պատճառով այդ նույն մեծահասակները չէին կարողանում լուծել իրենց աշխատանքի տեղավորման հարցերը: 55-ամյա կինը նշում է.

«Նոր Նորքում ծերանոց կար, սոցիալական աշխատող եմ եղել, հետո հղիացա ու դուրս էկա աշխատանքից: Դրանից հետո աշխատանք չկարողացա գտնել, քանի որ ռուսախոս եմ: Երբ փղաս գնաց դպրոց, իրա հետ տառերը սովորել եմ, հիմա կարդալ, գրել գիտեմ» (Ղազարյան 2015):

Այսպիսով, լեզու չիմանալը խոչընդոտ է հանդիսացել ադրբեջանահայերի սոցիալականացման ու ինտեգրման գործընթացը կազմակերպելու համար: Նրանք մեխանիկորեն մեկուսացվել են հասարակությունից, որը դժվարացրել է, երբեմն անհնարին դարձրել սոցիալականացման գործընթացը, ապա խոչընդոտ դարձել սոցիալ-տնտեսական խնդիրները հաղթահարելու ճանապարհին: Ադրբեջանից բռնագաղթվածների 81%-ը ապրել են Ադրբեջանի խոշոր քաղաքներում և նրանց 70%-ից ավելին ունեին բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն (Պողոսյան և Ավագյան 1998), լինելով խորհրդային ժամանակաշրջանի արժեքային համակարգի կրողներ, նրանցից շատերը ունենալով բարձրագույն կրթություն, չէին համակերպվում կատարել ոչ իրենց կրթությանը համապատասխան աշխատանք, կամ աշխատում էին, բայց՝ հասարակության մեջ զգում օտար և անտեսված:

1991 թ. անկախացումից հետո ՀՀ-ում ձևավորվում էր նոր արժեքային համակարգ, նոր իրողություն, սակայն հասարակությունը, հատկապես նրա խոցելի մաս կազմող ադրբեջանահայ փախստականներն ի վիճակի չէին միանգամից հարմարվել նոր իրականությանը՝ մոռանալով իրենց կենսակերպն ու կենսափորձը: Միևնույն ժամանակ անկախացումից հետո նպատակ դրվեց ազգային արժեքների «վերակենդանացումը» (Գաբրիելյան և ուրիշներ 2003), որոնցից մեկն էլ մայրենի լեզվի՝ հայերենի քարոզչությունն էր ընդդեմ ռուսերենի: Այսպիսով, պետական քաղաքականությունը, մյուս կողմից էլ երկրում ստեղծված ծանր տնտեսական դրությունը, երկրաշարժի հետևանքները, պատերազմը, շրջափակումը հնարավորություն չէին տալիս կառավարությանը իրականացնելու կանոնակարգված ինտեգրման քայլեր, և շատ հարցեր պարզապես լուծվում էին ինքնահոսի կամ ներխմբային՝ ինչպես իրենց էին անվանում «բաքվեցիների» ուժերով:

Գրականություն

***Արսենյան Ս.* 1991.**
Հյուրեր, որ նաև տանտերեր են: Դպրություն, 31 օգոստոսի, շաբաթ, 5:

Գաբրիելյան և ուրիշներ* 2003 – *Գաբրիելյան Մ., Դաբաղյան Ա., Թադևոսյան Ա., Մարգարյան Ն.
Հոգևոր անվտանգության ապահովման և բարոյական արժեքների պահպանման հիմնադրույթները ազգային անվտանգության համատեքստում, Երևան:

Միգրացիոն Պետական Ծառայություն (Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարություն) (http://www.smsmta.am/?menu_id=68), դիտվել է 15.06.2015:

***Խառապյան Հ.* 1999.**
Մենք ու նրանք, թե՞ օտարները յուրայինների մեջ (փախստականներ և հնաբնակներ), Հայ-ֆրանսիական պատմամշակութային առնչություններ, VI միջազգային գիտաժողովի նյութեր, 5 հոկտեմբեր, Երևան, 58-59:

***Ղազարյան Ծ.* 2015.**
Դաշտային ազգագրական նյութեր Շիրակի 2ա, Արցախի փ. 4-րդ նրբանցք 10/2 հանրակացարաններում: Երևան:

***Ղազարյան Ծ.* 2015-2016.**
Դաշտային ազգագրական նյութեր, ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության միգրացիոն պետական ծառայությունում: Երևան:

***ՀՀ օրենք լեզվի մասին.* 1993.**
Հայաստանի Հանրապետության օրենք, ընդունվել է 17.04.1993: http://www.arlis.am/, 15. 01. 2016:

***Մարության Հ.* 2009.**
Հայրենադարձության և աբսորբցիայի իսրայելական փորձից: «21-րդ ԴԱՐ», 1(23): 88-102:

***Շալունց Ա.* 1992.**
Մայրենին դառնում է ավելի հարազատ: Դպրություն, 7 մայիսի, 2:

***Պողոսյան Գ., Ավագյան Գ.* 1998.**
Փախստականների սոցիալական ադապտացիան (սոցիոլոգիական ուսումնասիրություն), Երևան, ՀՀ ԳԱԱ:

***Վերանյան Կ.* 2015.**
«21-րդ ԴԱՐ», 1, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=13180, 12.03.2017:

***Abrahamyan L.* 2005.**
Mother Tongue: Linguistic Nationalism and The Cult of Translation in Postcommunist Armenia." Working Paper Series. Berkeley: University of California. Retrieved 08.04.2017, from http://ist-socrates.berkeley.edu/~bsp/publications/1998_01-abra.pdf.

***Antonyan Y.* 2012.**
The Armenian Intelligentsia Today: Discourses of Self-Identification and Self-Perception, Laboratorium, 4(1): 76–100.

***Crisp J.* 2004.**
The local integration and local settlement of refugees: a conceptual and historical analysis. New Issues in Refugee Research, Working Paper No. 102. The UN Refugee Agency. Retrieved 12. 03. 2017, from http://www.unhcr.org/407d3b762.pdf.

***Eastmode M.* 2007.**
Stories as lived experience: Narratives in forced migration research. Journal of Refugee Studies, Oxford University Press, 20(2): 248-264.

***Ghazaryan Y.* 2017.**
"Obstacles to the Integration and Naturalization of Refugees: A Case Study of Ethnic Armenian Refugees in Armenia" American University of Armenia, Department of

Political Science and International Affairs, Center for Policy Analysis. Retrieved 13. 03. 2017, from http://unpan1.un.org/intradoc/groups/public/documents/nispacee/unpan005595.pdf.

***Migration Newsletter.* 2015.**
Migration Newsletter, Collective Security Treaty Organization (CSTO) Member States Authorized Bodies Coordination Council Session on Fight against Illegal Migration, 8. Retrieved 24. 06. 2015, from http://smsmta.am/upload/Newsletter_English_N8.pdf.

***Арутюнян Ю. В., Дробижева Л. М.* 1987.**
Многообразие культурной жизни народов СССР. Москва.

***Харатян Л.* 2008.**
Освоение «чужого» пространство: армяне-беженцы в «азербайджанских» селах Армении. Разгадать Южный Кавказ. Общества и среда обитания. Сборник статей, Тбилиси, 129-145.

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2

Հ Ա Բ Ի Տ Ո Ւ Մ

ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2

Էջադրումը և ձևավորումը
Արթուր Հարությունյանի

Շապիկը՝
Ռոման Հովսեփյանի

Habitus-ի խմբագրակազմը շնորհակալություն է հայտնում ազգագրագետ, պատմական գիտությունների դոկտոր **Հարություն Մարությանին** և **Մարիամ Շահմուրադյանին**՝ խմբագրական աշխատանքներին աջակցելու և խորհուրդների համար:

Շնորհակալություն ենք հայտնում ազգագրագետ, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ **Լևոն Աբրահամյանին**՝ իր հեղինակած երգիծանկարները տրամադրելու համար:

Խմբագրության հասցեն՝
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,
Հասցե՝ 0025, ՀՀ, ք. Երևան, Չարենցի փ. 15,
Habitus-ի էլեկտրոնային փոստը՝ habitus.iae.am@gmail.com
Կայքը՝ www.iae.am, www.iae.am/hy/HABITUS

Editorial office:
Institute of Archaeology and Ethnography, NAS RA.
Address: 15 Charents str., 0025, Yerevan, Armenia
Email of Habitus: habitus.iae.am@gmail.com
Web page: www.iae.am, www.iae.am/en/Habitus-2

Տպագրված է «Հայկարլի ՍՊԸ» տպարանում
Հեռ. 091 206 115

Չափսը՝ 70×100 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
16.5 տպագր. մամուլ: Տպաքանակը՝ 200 օրինակ:

PROCEEDINGS OF THE INSTITUTE
OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY · 2

HABITUS · 2